

տի խճաքարի և որմնաքարի վերայ, և ըստ
պիտակադեղոյ գործարանաց գործաւորքն
սլարտաւոր են գտանել հնարս՝ ըստ կա-
րելոյն նուազ շնչառութեամբ ընդունել
զփսշին՝ յորոց միջի նոքա աշխատեն։ Ըմ-
բողջութեամբ թռչուած նուրբ քօղով
երեսը ծածկելը յաջողութեամբ գործա-
դրուած է մի քանի գործաւորաց գոր-
ծածութեամբ։

Ընդ երկայն սղոցողն չափաւ ծած-
կելով զիւր աշս՝ ազատի աշացաւութենէ,
որ պատճառի սղոցածի մզկղներէն։

Խոհանոցաց և աղբանոցաց մաքրու-
թեան դժուարին պաշտօնների մէջ զիւ-
րաբաժնիկի ստոյգ հիւանդութիւնք ան-
հոգութեամբ փութապէս դառնան ան-
բուժելի, և հետևաբար մահառիթ։

— ԴՆԱՄ (յաճարաւ քանի՞ գոյ) ԿԱՐԷ

յոյաթ 3 միմի (Մնացեալն է յետագայ)

Թ. ՅՈՎԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼԷՌՆ Զ, ԵՒ ՆՈՐԱՆ ԱՐԿԱՆԻ

Ո՛ր Լուսինեան այն քաջ Լէան՝ Հայրենիքի անձնանէր։

Ո՛ր վեհ հանձար զիւցազնական երբ Վրէկեայ կայր անտէր։

Եւաղ բաղդին, մինչ նոր ճրագ իւր առկայծեալ պատրոյկով

Կամենում էր լոյս տալ Հային, շիջաւ, դարձեալ մութ պատեց։

Բաղդի պարներ, ախ, ինչպէս շուտ՝ շուտ տեղացին իւր վերայ։

Ի՛նչ տարաբաղդ իւր ախտով յոյս Հայերի Վրէկեայ։

Հայ ազգութեան ճակատագիր, ինչո՞ւ պղպէս դրոշմուցեր։

Հալածանքի և կապանքի պատրաստելո՞ւ Հային օրեր։

Հաստ կարծեցիր Հայաստանին՝ խեղճ որբանին մարդկութեան,

ճակատագիր, խեղճ Լէոնին Եգիպտական նենգ զօրքով՝

Կաշկանդեցի՛ր այն վեհ արքայ և քաջութիւն և հանձար։

Լեոն՝ մարդից վճատութիւն մինչ Հայրենաց կամի ծար։

Հայրենի սէրն վառ մի բոց է, շիջուցանել ո՞վ կարէ,

Հայրենասէրն յօժար կմեռնի՝ միայն ազգին ի փրկանք։

Ի՛նչ է մահը նա վաղում՝ է պատերազմի գոռ հանդէս,

Մեռնի՛ւ այն տեղ խիստ քարդեղով իւր թշնամեաց գոնէ կէս։

« Կայ Վրէկիա, տսէր Լ՛ոն, և ես իբր տէր արքայ,

Ուստի՛ դուրս գամ այս կրճերից տալ Հայերին ապագայ։

Երեանս գնով թող որ լինի թշուառ, Հայի փրկութիւն,

Հատ լիցի ինձ, զի Հայք ինձ տան աշխարհ վեհ անուն։

« Մինչ երբ լքած կրճերի մէջ՝ օրս անցնեմ դառնակիր,

Մինչ երբ թողում իմ թագուհի լալ և սգալ վշտակիր։

Մինչ երբ ծածկուած ամուսններում թող տամ զօրքին թշնամուս,
 Սուր սուսերով հալմաշ առնել երկիրս և տունս Աթոռովս,
 « Կեղծ մահուս դոյժ Եւրոպ հասաւ, մինչ երբ այսպէս թաք կենամ,
 Օթոն *) կամի աթոռս ելնել, անտարբեր ցերբս հս մնամ,
 Մի արքայի մահ է անշուշտ՝ երբ տեսանէ իւր զահում՝
 Նստած այլ որ և վարում է իւր տէրութիւն բազմահոգս,
 Այս ասաց նա, և անվեհեր սուրբ ձեռքին դուրս վազեց,
 Հասաւ Աթոռն և արքունիք անարգել ներս մուտ դործեց,
 Բայց չար բաղդի հարուածները չը դապրեցան յարկօծել,
 Խեղճ Լէոնին աթոռազուրկ երկրորդ անգամ վայր ձգել,
 Չար Մէլէք - էլ - Էշրէֆ - Շապան զէպ Կիլիկիայ ուղի բացած,
 Ազդու կերպով շինայեց կրշոել նմին միւս հարուած:
 Արդ ո՞ր Լէոն և Հայ որեսար, - զօրապետից կաշկանդուած,
 Եգիպտոսում են բանտարկվում, ո՞չ Հային, վշտաց վիճակուած:
 Մերթ թաղաւորս տէր և իշխանս, մերթ կրծերում ամրացած,
 Եւ վերջապէս ողի առած իւր աթոռում հաստատուած,
 Եղուկ բաղդին, այժմիկ բանտում Եգիպտական աշխարհում,
 Ձրկուած ամեն իրաւունքէ՝ թշուառ օրերն է ողբում:
 Չգայուն սիրտ չէ, չէ կարօղ և ոչ մի ժամ ժուժկալել,
 Երբ ընտանիք չար թշնամուց ստնակոխուած տեսանէ,
 Եգիպտական պղծաշուրթն զօրք ինչե՞ր արդեօ՞ք չգործեցին,
 Սարակինոսք անգրթարար ի՞նչ եղեւանք չը յարուցին:
 Մի՞թէ Լէոն, այն վեհ Լէոն շղթաներով նուաճուած՝
 Յեգիպտական բանտ իւր համար չքեղ պալատ է ընտրած.
 Կամ թէ ցոյն վայր նա անտարբեր՝ մինչ իւր աշխարհ կործանուած,
 Սամփոնին պէս չէր գոչելու « մեռցի անձն իմ ընդ՝ անօրէնս », :
 Հայրենի սէր չէ այնքան թող վեհ արքայի վառ սրտում՝
 Մինչ շղթաներ չզօրանար կտոր կտոր խորտակել .
 Բայց այն հանձար դիւցազնական համբերութեան դաս ուսած՝
 Համբերութեամբ կամենում էր գտնել ողի քաջացած:
 Ահա հասաւ և այն մեծ օր՝ նորա սրտին արեգակ:
 Ահա հասաւ այն սուրբ օրը՝ համբերութեան իւր պսակ:
 Ձի, մինչ Սոհեր *) իւր բանտակից ազատուեցաւ կապանքից՝
 Մինչ մեծ յոյսեր նա յղացած ծնաւ առջև արքայի:
 « Մի վհատիր, քաջ թաղաւոր, դիտես, ազատ եմ՝ այսօր,
 Վերքերիդ բոյժ կհայթայթեմ, թէպէտ կեանքս է անզօր.
 Իմ այս կեանքը ամեն վտանգ անվեհիւր յանձն է առնում,
 Որ Բեզ ճարէ ազատութիւն, քեզմով բոլոր Հայերի:

(*) Օթոն էր գուքս Պաւսանիայի, որ պետի ամբաստանար Լէոնի ամուսին Մարիամ Թադաւոյ հետ, Հռովմայեցոց Գրիգոր ԺԱ պապի Թելաղբութեամբ, որը այս Գործի կատարումը յանձնեց Տաւրնոսացի Փիլիպպոս իշխանին, որ Թաւադաւոյ ազգականն էր:

(*) Սոհեր կամ Շահան իշխան Կորիկոս բերդի:

« Ես կզիմեմ դէպ ի Կղեմէս, նա մեծ ունի զօրութիւն,
նա պապ է հակ Ուրանոսի Գաղղիացւոց Աւետնում:

Նա գիտեմ ես, աղուխաբար կաշխատի որս ձեռք ձգել,
Ամեն միջոց գործ կը դնէ, բայց մենք մեր միտքը գիտենք:

« Մեզ չէ կարող զրգել հիմից Սուրբ Գրիգորի հաստատած,
Ոչ սուր, ոչ հուր, ոչ կապանքներ. սերտ է մեր կապ նորա հետ
Ես կընդդրեմ այն աղուէսից Ազատութիւն սիրելի:

2է, ամօթ չէ խնդրել պիտոյք, այլ յամառուած մեռանել, »

Գնաց Սոհեր, բայց ի՞նչ օգուտ, երբ փակուած է բաղդի մուտք,
Որ պապեր զլանում են վերջին նրպաստ գէթ ձօնել:

Ուրեմն Սոհեր, ճեպ տուր ոտքիդ դէպ Կաստիլեան Յովհաննէս,
Դէպ ի Սպանիա, ողորմած է, չզլանալ ողորմել:

Թէպէտ Լէոն ստացաւ լուր ի բերկրառիթ խնդութեամբ,
Քանզի Յովհան միջնորդ եղաւ շնորհել նորան ազատ ժամ:

Դուրս եկաւ նա ահեղ բանտից երազելով մեծ յոյսեր,

Դուրս եկաւ նա, իւր Կիլիկեայն առնել աւերն բարերբեր:

Բայց Կիլիկիան՝ նորան գրաւել իւր քարութանդ բերդերով՝

Ո՛չ, չէր կարող, այլ ճանապարհ բռնադըսուած նա ընտրեց,

Դէպ ի արքայ այն բարեխնամ՝ ազատարարն Յովհաննէս,

Մեծ երախտեաց բոլոր սրտէ ձօնել անկեղծ հաւաստիք:

Եւ Գաղղիայում մնացին գործեր, դէպ ի Կարոս նա փութաց
Դէպ ի Անգղիա, նա չուշացաւ գտնել գո՛նէ այնտեղ ճար:

Երկու հզօր տէրութեանց միջ կամենում էր սեր ձգել,

Օգուտ ձօնել թշուառ աղզին՝ որի միակ մեծ ջանքն էր:

Բայց այն զուռը՝ որ փակել էր Իմաստութիւնն Աստուծոյ,

Լէոն կարէ՞ր բացել իւրեան, եղծել կընիք մշտնջիւն,

Որին դժբաղդն Կիլիկիա չեղաւ կարող հիւրընկալել,

Այնուհետեւ մնացին պալատք սուրբ Անտօնի շատ շքեղ:

Եւ վերջապէս դժբաղդ Լէոն ածիւնանալ, ո՛ւր յանձն առաւ, —

Օտար երկրո՛ւմ, թէ ուր սիրէր հայրենիքում ողբալի:

Օտար երկրո՛ւմ ամփոփուեցաւ հայրենիքին անձկայրեաց,

Թէ արքունի գերեզմանում վերջին ճրագ Ռուբենեանց: —

Կեղեասինեան մնաց նորան պատասպարան հանգստեան,

Կեղեասինեան զարդարուեցաւ նորա շքեղ դամբանով:

Հայն անձուկ գերեզմանի իւր դժբաղդիկ արքայի՝

Գաղղիացին ընդգրկում է դամբան տըխուր Լէոնի:

Թէպէտ Լէոն, քեզ զրաւեց ճօխ արքունիք Եւրոպի,

Սահայն անուն քո՝ վեհ անուն սիւն է լըքած Հայ սրտի:

Սուրբ հայրենիք խանձղվում է քո վառ սիրոյ խարոյկում,

Թէպէտ հեռու մնացիր ազգիցդ օտար երկիրում: